

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԸ

* * *

Յառաջիկայ Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներու ընթացքին Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան Արեւելեան Թեմի բոլոր հայաչափ քաղաքներուն մէջ մեծ շքով պիտի տօնախմբուին «Հայոց Հայրիկ» Տ. Մկրտիչ Կաթողիկոսի Կոնդակով Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան հաստատման յիսնամեակի հանդիսութիւնները:

Առաջնորդարանի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Վիճակիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրան Եպիսկոպոսի նախագահութեամբ կազմուած է Առաջնորդարանի Հաստատման Յիսնամեայ Յորելեանի Կեդրոնական Յանձնախումբ մը, թեմի համայնքներուն մէջ կազմուած յորելինական յանձնախումբերու գործունէութիւնը կազմակերպելու, առաջնորդելու եւ անոնց գործակցելու համար:

Այս տարուայ Ապրիլէն սկսեալ Կեդրոնական Յանձնախումբը՝ Պր. Նշան Եահինեանի ատենապետութեամբ, իր տասնեւեօթը անդամներէ բաղկացեալ կազմով ժողովներ գումարած եւ ծրագիրներ մշակելով զբաղած է որպէսզի յորելինական հանդիսութիւնները տօնուին շքով ու պատշաճ վայելչութեամբ:

Յորելինական տօնակատարութեան նպատակը պիտի ըլլայ. —

Ա. — Առաջնորդարանի յիսուն տարուան կեանքն ու յառաջդիմութիւնը պատկերացնել: Ժողովուրդին եւ Հայութեան հաւատքը զօրացնել Ամերիկայի մէջ իր մնայուն գոյութեան եւ ապագային մասին, շեշտելով դերն ու կարեւորութիւնը Հայց. Եկեղեցիին: Միաժամանակ վեր հանել յիսուն տարիներու ընթացքին եկեղեցւոյ մէջ գործող անձանց եւ կազմակերպութեանց արժանիքները:

Բ. — Հանդիսութեանց երկրորդ նպատակը պիտի ըլլայ՝ հիմնադրամ մը գոյացնել որպէսզի Ամերիկայի մէջ հոգեւորականաց պատրաստութեան եւ կրթութեան համար ձեռնարկ կատարուի եւ յատկապէս հոգեւոր ձեմարանի մը հիմը դրուի:

Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան Յիսնամեակի առիթով՝ հե-

տեւեալ իրողութիւններն ու տեսութիւնները յատկապէս ուշադրութեան առարկայ պէտք է ըլլան :

1. — Ամերիկայի Հայոց Առաջնորդական Վիճակը՝ մէկ մասը կամ ճիւղն է ընդհանուր Հայոց Եկեղեցւոյն՝ որ տարածուած է աշխարհի մէջ, Մանչեսթրիայէն դէպի արեւմուտք մինչեւ Գալիֆորնիա, եւ Հիւսիսային երկիրներէն մինչեւ Հարաւային Ամերիկա եւ Եթովպիա : Հետեւաբար անիկա կ'ապրի եւ կը գործէ իրրեւ Հայ Եկեղեցւոյ մարմինն մէկ անդամը :

2. — Առաջնորդարանը, Առաջնորդին գլխաւորութեամբ՝ ներկայացուցիչն է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան եւ ենթակայ է սուրբ Էջմիածնի հոգեւոր եկեղեցական իրաւասութեան :

Առաջնորդարանը կը ճանչնայ Հայոց Եկեղեցւոյ միւս Առաջնորդական աթոռները, կը ճանչցուի անոնցմէ եւ ի պահանջել հարկին կը գործակցի անոնց, բոլոր այն խնդիրներուն մէջ՝ որոնք Հայոց Եկեղեցւոյ ընդհանուր օգտին կը վերաբերին :

Ամերիկայի Հայոց Առաջնորդարանը՝ ուրեմն, աղբիւն եւ եկեղեցիին լրութեանը մէջ իր կարեւոր տեղը կը դրուէ եւ իր նուիրական պաշտօնը կը կատարէ, Հայոց ուղղափառ հաւատքը վստա պահելով եւ Հայ ազգին յառաջիմութեան գործին իր բաժինը բերելով :

3. — Հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին՝ Հայոց Եկեղեցին է որ իր դաւակներուն ջամբած է հոգեւոր սնունդ եւ զայն պահած է կենսունակ ու առողջ : Իր տազնապալից ու դժբախտ պատմութեան ընթացքին՝ Հայը իր եկեղեցիին մէջ իր քրիստոնէական հաւատքի կանթիկը թոյլ չէ տուած որ մարի : Իր մայր հողէն հեռու՝ Հայը իր փոքր համայնքներուն մէջ իսկ իրեն առաջին մտահոգութիւն ըրած է շինել իր եկեղեցին եւ անոր մօտիկ իր դպրոցը եւ անոնցմով ուժ առած է իր կեանքի պայքարը մղելու :

Պատմութեան դալիք դարերուն եւս Հայութեան հոգեւոր կեանքին եւ գոյութեան կենսատու աղբիւրը պիտի ըլլայ Հայ Եկեղեցին : Ինչպէս անցեալին՝ նոյնպէս ապագային պիտի կատարէ ան իր սուրբ պաշտօնը եւ պիտի շարունակէ քալել եկեղեցւոյ հայրերուն եւ Հայ ժողովուրդի պատմութեան դժած ուղիով :

4. — Ամերիկայի մէջ հաստատուած Հայութիւնը անցնող յիսուն տարիներու ընթացքին ունեցած է դժուարութիւններ ու սաղնապներ, ինչպէս անոր պատմութեան ընթերցումը պիտի ցուցնէ :

Բայց այնու ամենայնիւ յիսուն տարուան ընթացքին նշանակելի վերելք ունեցած է ան : Հայութեան հետզհետէ թուական ամճան հետեւանքով՝ անոր եկեղեցական եւ այլ մշակութային կազմակերպութիւնները խարխիսի նետած եւ զօրացած են :

Հայ Եկեղեցին եւ անոր գլուխ Առաջնորդարանը՝ Աստուծոյ շնորհիւ յաջողած է այս երկրին մէջ ուրիշ հասարակութեանց կարգին իր վայել դիրքը գրաւել եւ իր կենսական գործը կատարել Հայութեան համար :

Հայ Եկեղեցին է որ Առաջնորդարանի կեդրոնական ղեկավարութեամբ՝ Ամերիկայի Հայ ժողովուրդին դիմագիծը եւ կենսունակութիւնը պահած է :

Հայ ժողովուրդի կրօնատէր եւ բարեպաշտ հոգիներ իրենց եկեղեցւոյն մէջ դտած են իրենց հոգեկան մխիթարութիւնը՝ զոր չէին կրնար ե պիտի չկրնան դառնել այլուր :

Շատ մը քաղաքներու մէջ՝ ցիրուցան ու անկազմակերպ մեծ ու փոքր համայնքներու մէջ, Առաջնորդարանը իրրեւ հոգեւոր իշխանութիւն հոգատար կեդրոն՝ ստեղծած է հոգեկան եւ վարչական կապ, եւ դանոնք ի մի ձուլած է :

5. — Առաջնորդարանը Ամերիկայի մէջ գլխաւորած է համազգային օգնութեան շատ մը ձեւերակներ՝ եւ զօրավիգ կանգնած է շատ մը շարժումներու, անոնց յաջողութեան մեծապէս նպաստելով եւ արժեքներով իր պաշտօնը եւ անունը՝ պայմաններու ներածին չափով :

Ամերիկայի Առաջնորդական Վիճակին մէջ 50 տարուան ընթացքին միջին հաշուով երկու տարին անգամ մը մէկ եկեղեցի շինուած կամ գնուած է : Շատ մը համայնքներ, որոնք եկեղեցի չունին, կազմակերպուած են :

6. — Ամերիկայի Հայոց Առաջնորդարանը անջատ հաստատութիւն մը կամ ուրիշ կազմակերպութեանց կարգին՝ ինքն ալ կազմակերպութիւն մը չէ : Անիկա տասնեւինը դարերու սուրբ եւ պատկառելի Հայ Եկեղեցին կը ներկայացնէ եւ բոլոր Հայեր՝ ինչ քաղաքական, բարեփրական եւ այլ կազմակերպութեան ալ պատկանին անոնք, իրեն կապուած կը հաշուէ եւ իր ժողովուրդը կը նկատէ :

7. — Առաջնորդարանի յիսուն տարուան ընթացքին կատարած գործը արդիւնք է անհամար հոգիներու յարատեւ ջանքերուն եւ նուիրաբերութեանց, որոնցմով անոնք եկեղեցին կանգուն պահած են, Աս-

տուժոյ եւ անոր Ս. Հոգիին շնորհիւ: Այդ արնիւ հոգիները անթիւ դժուարութիւններ յաղթահարած, եւ իրենց հոգեւոր եւ արդարյին միակ իշխանութիւնը ներկայացնող Առաջնորդարանը ինչոյէս նաեւ անոր ենթակայ եկեղեցիները պայծառ պահած են, հասցնելով դանոնք այժմու գոհացուցիչ եւ համեմատաբար բարգաւաճ վիճակին:

Այս արդիւնքը դովեստի եւ փառքի կոթող մըն է Վիճակիս Առաջնորդ եղած Սրբազան Հայրերուն, Գեր. եւ Արժ. հոգեւորականներուն, Կեդր. Վարչութեան անդամներուն, Երեսփոխաններուն, Օժանդակ Միութեան, Հոգաբարձութեանց, Տիկնանց Միութեանց, Ուսումնական Խորհուրդի, Գլխորդներու Խնամակալութեանց եւ Վիճակային ու ծխական դանադան մարմիններու արնիւ անդամներուն եւ ամբողջ եկեղեցասէր հասարակութեան համար:

Ամերիկան Հայութեան կուտայ թանկագին պատեհութիւններ եւ աղատութիւն՝ պահելու եւ դարգացնելու իր եկեղեցական եւ ազգային աւանդութիւնները, իր մամուլն ու ծխական դպրոցները, իր բարեգործական եւ կրթական հաստատութիւնները: Ամերիկահայութիւնը մեծաւ մասամբ կրցած է եւ առաւելագոյն չափով ապագային պիտի կրնայ, օգտուելով այս պատեհութիւններէն, պահել ու դարգացնել իր հոգեւոր եւ ազգային ուրոյն կեանքը, եկեղեցւոյ հովանիին եւ առաջնորդութեան ներքեւ: Այս բանը պիտի կրնայ ընել՝ եթէ պատշաճեցնէ իր կեանքը այս երկրի պայմաններուն, առանց խաթարելու իր հաւատքին եւ աւանդութեանց էական նկարագիրը:

Միայն Հայ Եկեղեցին չէ որ այս պարտականութիւնն ու պաշտօնն ստանձնած է այս երկրին մէջ: Իրեն նման մեծ ու փոքր բազմաթիւ ազգային կամ եկեղեցական խմբաւորեալ հասարակութիւններ կան որոնք իրենց եկեղեցւոյն եւ հաւատքին շուրջ բոլորուած՝ արդիւնաւոր գործունէութիւն յառաջ կը տանին, պահելու եւ դարգացնելու իրենց հաստատութիւնները եւ իրենց հոգեւոր ու ազգային ուրոյն կեանքը: Այսպէս, մեր կացութեան մէջ կը գտնուին Արեւելեան Եւրոպայէն կամ մերձաւոր Արեւելքէն Ամերիկա եկած եւ հաստատուած շատ մը հասարակութիւններ՝ Յոյներ, Սերպեր, Պուլկարներ, Ասորիներ եւ շատ մը ուրիշներ: Ասոնց օրինակը պէտք է խթան ըլլայ Հայերուս, եւ հեռու վանէ մեղմէ ապագայի մասին անհիմն յոռետեսութիւնը:

Հայութիւնը Ամերիկայի մէջ արդէն բարեկեցիկ դիրք մը շինած է տնտեսական տեսակէտէ, եւ բաւական է որ Հայեր ու Հայ Եկեղեցւոյ զաւակներ լաւատեսութեամբ եւ անձնուիրութեամբ՝ բարոյսապէս եւ տնտեսապէս ստատար հանդիսանան Հայ Եկեղեցիին եւ Առաջնորդարանին որպէսզի բազմաթիւ ապագայ Հայութեան յիստուն տարիներու դո-

յութիւնը ապահովուած ըլլայ եւ ազգը Աստուծոյ եւ մարդկութեան իր ծառայութիւնը մշտնջենաւորէ:

9.— Ամերիկահայ երիտասարդ սերունդը աւելի հետաքրքրութիւն, սէր եւ գործելու տրամադրութիւն կը ցուցնէ հանդէպ իր եկեղեցիին՝ քան ինչ որ կ'ալիկալուէր անոնցմէ տասնեակ մը տարիներ առաջ: Պէտք եղած առաջնորդութեամբ եւ ուսուցումով պէտք է մեր երիտասարդներուն ունեցած հաւատքի եւ իրենց եկեղեցւոյն նկատմամբ հաւատարմութեան զգացումները մշակուին եւ օգտագործուին մեր եկեղեցւոյ ապագային հաշույն: Այս գործին մէջ կարեւոր դեր ունի կատարելիք Առաջնորդարանը՝ եթէ ծխական եկեղեցիները եւ ժողովուրդն առհասարակ զօրավիգ ըլլան անոր:

10.— Ամերիկայի մէջ բոլոր Հայ կազմակերպութեանց ապագան կապուած է Հայ Եկեղեցւոյ ճակատագրին: Հայ Եկեղեցին է միայն որ պիտի կրնայ ներշնչել Ամերիկահայ եկող սերունդներու Հայ ազգի եւ մշակոյթի սէրը, որ կեանքի պայմանը կը կազմէ բոլոր ուրիշ Հայ կազմակերպութեանց: Այդ պատճառաւ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի ղօրացումը՝ անուղղակի կերպով պիտի նպաստէ բոլոր ազգային հաստատութեանց գոյութեան եւ օգտակարութեան:

11.— Հայ Եկեղեցին ազգային նկարագիր ունենալով հանդերձ՝ Քրիստոսէ հիմնուած հաստատութիւն է եւ այդ պատճառաւ իր յաւիտենական պատգամը կուտայ Հայուն՝ ուր, երբ, եւ ինչ պայմաններու տակ ալ գտնուի ան:

Եւ պիտի չդադրին Հայեր իրենց Մայր Եկեղեցիին դիմելէ, վասնզի Հայ Եկեղեցին իր ուղղափառ հաւատքով եւ սքանչելի ծէսով, եւ Հայ հոգիի, լեզուի գանձարանի իր հանդամանքով, գերազանց է միւս բոլոր եկեղեցիներէն, իր վրայ կրելով հարազատ քրիստոնէութեան անողարտ կնիքը:

12.— Հայ Եկեղեցւոյ միջոցաւ եւ Առաջնորդարանի գործունէութեան հետեւանքով է միայն որ Հայ մշակոյթը կարելի պիտի ըլլայ ծանօթացնել թէ մեր նորահաս սերունդներուն եւ թէ այլ ազգերու մտաւորականութեան: Վասնզի Հայ մշակոյթը իր մէջ կը պարունակէ տարրեր՝ որոնք կը ներկայացնեն համամարդկային արժէք, եւ իբր այդ արժանի են ամէնուն ուշադրութեան:

13.— Բացի իր դուտ կրօնական իշխանութեան կիրարկումէն՝ Առաջնորդարանը պէտք է ուրեմն եւ կրնայ յառաջ տանիլ Ամերիկայի մէջ եկեղեցւոյ եւ հասարակութեան յառաջդիմութեան համար կենսական գործեր:

Կայ այս երկրին մէջ գործելու համար ձեռնհաս հողեւորականաց պատրաստութեան գործը, որ մեր պարտականութեանց առաջին գծին վրայ կը կենայ:

Մինչեւ որ իրենց կեանքը եւ իրենց ամբողջ ժամանակն ու կարողութիւնը եկեղեցւոյ նուիրած մարդիկ չաշխատին մշակելու եկեղեցւոյ հողեւոր անդաստանը՝ ուրիշ ամէն ջանքեր ի զուր պիտի ի գործ դրուին եւ ամէն պատեհութիւններ եւ դիւրութիւններ անողուտ պիտի անցնին:

Այդ պատճառաւ անհրաժեշտ է որ Առաջնորդարանը ունենայ իր հողեւոր ճեմարանը՝ ուր կարենան նուիրեալ երիտասարդներ պատրաստուիլ՝ օգտուելով Ամերիկեան համալսարաններու եւ ճեմարաններու ընձեռած բարիքներէն եւ միաժամանակ ստանալով Հայ Եկեղեցական ուսուցում՝ ձեռնհաս Հայ վարդապետներէ:

14.— Առաջնորդարանը պէտք է նաեւ հրատարակէ Հայ եկեղեցական, կրօնական ինչպէս նաեւ հայկական մշակութային գրականութիւն, մեր երիտասարդներուն մտքին մէջ արթնցնելու համար դիտակցութիւնը իրենց ազգային արժէքներուն: Պէտք է ծաւալէ իր մամուլը եւ անոր միջոցաւ մեր եկեղեցին ու ազգը ճանչցնէ մեր յաջորդներուն: Պէտք է կիրարկէ ամէն միջոց իր նպատակը հետապնդելու համար:

15.— Առաջնորդարանը տակաւին պէտք է զարկ տայ Հայերէնի դպրոցներուն եւ Հայ մանուկներուն ջամբէ հնար եղածին չափ հայեցի կրթութիւն:

Այսպիսի եւ նման շատ մը գործերու համար Առաջնորդարանը պէտք ունի իր ժողովուրդի սիրոյն եւ պաշտպանութեան, եւ անոնց տնտեսական եւ բարոյական գործակցութեան:

Երբ կը տօնենք Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի հաստատման յիսնամեակը՝ պէտք է հրճուինք որ յիսուն տարիներէ ի վեր ցանուած բարի սերմերը մեծ բարիքներ տուած են Ամերիկահայութեան կեանքին համար: Պէտք է անդրադառնանք անցեալին եւ անկէ ներշնչուած ստանանք: Պէտք է նայինք մանաւանդ ապագային եւ զայն դիմադրաւենք ուղիղ կեցուածքով եւ զօրաւոր հաւատքով:

Վստահ ենք որ Ամերիկայի Հայութիւնը պիտի ըմբռնէ այս կարեւոր տօնակատարութեան իմաստը եւ արժէքը, եւ զայն ողբերգիչ ու օգտակար պիտի ընծայէ ամէն կերպով:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ
ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՅԵԼԵԱՆԻ

ԿԱՐԳ ՄԸ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

* * *

- 1834 — Այս տարին Ամերիկա կը զաղթէ առաջին Հայը՝ որպէս ուսանող:
- 1870 — 1880, Կիլիկիայէն եւ գաւառներէն ուսանողներ Ամերիկա կուգան եւ ուսումնաւարտ ըլլալով կը վերադառնան երկիր:
- 1889 — Առաջին Հայ հողեւորականը՝ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարաձեան, կուգայ Ամերիկա:
- 1895 — Այս թուականէն սկսեալ նոր հոսանք մը կը սկսի դէպի Ամերիկա, Համիտեան ջարդերու հետեւանքով. գաղթողներու մէջ կը գտնուին նաեւ վեց հողեւորականներ:
- 1889 — Առաջին Հայ պատարազը կը մատուցուի Ուստըրի մէջ:
- 1891 — Առաջին Հայ Եկեղեցին կ'օծուի՝ Ուստըրի մէջ:
- 1894 — Տ. Մաղաքիա Ծ. Վրդ. Տիրանեան կուգայ Ամերիկա իրբեւ Ուստըրի հովիւ:
- 1898 — Սոյն տարւոյ Հոկտեմբերի 16-ին Հայրապետական Կոնգակի ընթերցումով Առաջնորդարանը կը հաստատուի Ուստըրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ, եւ առաջին Առաջնորդը կ'ըլլայ՝ Տ. Յովսէփ Եպս. Սարաձեան:
- 1901 — Յունիս 17-18-ին առաջին հողեւորականաց համազումարը տեղի կ'ունենայ:
- 1902 — Յունիս 12-ին կը գումարուի առաջին Երեսփոխանական Ժողովը Ուստըրի մէջ եւ կը կազմուի թեմին կանոնադրութիւնը:

- 1904 — Մայիս 23-ին երկրորդ հոգևորականաց համագումարը տեղի կ'ունենայ :
- 1906 — Երկրորդ Երեսփոխանական ժողովը տեղի կ'ունենայ :
- 1907 — Մայիս 30-ին երրորդ Երեսփոխանական ժողովը Առաջնորդ կ'ընտրէ Տ. Եզնիկ Արքեպսկ. Ապահունին :
- 1913 — Տ. Գէորգ Արքեպս. Իւթիւճեան Ամերիկա կը ժամանէ որպէս Հայրապետական Լիազօր Պատուիրակ եւ Ջ. Երեսփոխանական ժողովը Առաջնորդ կ'ընտրէ Տ. Արսէն Ծ. Վրդ. Վեհունին : Առաջնորդական թեմը այս շրջանին կ'ընդգրկէ ամբողջ Միացեալ Նահանգաց եւ Հարաւային Ամերիկայի Հայութիւնը :
- 1920 — Տ. Խորէն Եպսկ. Մուրատպէզեան կը ժամանէ իբրեւ Հայրապետական Լիազօր : Իր գումարել տուած Երեսփոխանական ժողովը Առաջնորդ կ'ընտրէ Տ. Տիրայր Եպս. Տ. Յովհաննիսեանը :
- 1923 — Առաջնորդարանը Ուստըրէն կը փոխադրուի Պոսթոն :
- 1927 — Առաջնորդարանը կը փոխադրուի Նիւ Եորք :
- 1928 — Գալիֆորնիոյ շրջանը՝ Հայրապետական Կոնդակով կը զատուի մայր թեմէն եւ կ'ունենայ ուրոյն վարչութիւն եւ Առաջնորդ : Այս տարին Միացեալ Նահանգաց մէջ Հայկական եկեղեցիներու թիւը հասած կ'ըլլայ 19-ի :
- Նոյն տարին Երեսփոխանական ժողովը կը քուէարկէ Յանձնախումբի մը կողմէ պատրաստուած Ամերիկայի Հայ Եկեղեցւոյ կանոնադրութիւնը, «Ամերիկայի Հայոց Ազգային Սահմանադրութիւն» անուամբ :
- 1929 — Ամենայն Հայոց Հայրապետ՝ Գէորգ Ե. կը հրամայէ նախորդ տարուան Երեսփոխանական ժողովի ընդունած Կանոնադրութեան դործադրութիւնը՝ «Առժամանակեայ» կերպով :
- 1931 — Երեսփոխանական ժողովը Առաջնորդ կ'ընտրէ Տ. Ղեւոնդ Եպս. Դուրեանը :

- 1932 — Ամերիկայի Հայոց թեմը կը մասնակցի Կաթողիկոսական ընտրութեան՝ երկու պատգամաւորներով :
- 1933 — Երեսփոխանական ժողովը կը պառակտի եւ ժողովուրդին մէկ մասը կ'անջատուի Հայոց Եկեղեցիէն : Տեղի կ'ունենայ Առաջնորդ Տ. Ղեւոնդ Արքեպս. ի սպանութիւնը :
- 1936 — Ամերիկա կը ժամանէ Հայրապետական Նուիրակ՝ Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանց :
- 1938 — Հարաւային Ամերիկայի շրջանը կը կազմէ ուրոյն Առաջնորդական Վիճակ՝ զատուելով Ամերիկայի Հայոց Առաջնորդութենէն :
- Ամերիկայի Հայոց Առաջնորդական թեմի հաստատման Քառասնամեակը կը տօնուի՝ Տ. Մամբրէ Եպս. Գալֆաեանի տեղապահութեան ատեն :
- Նոյն տարին Երեսփոխանական ժողովը Առաջնորդ կ'ընտրէ Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանցը :
- 1939 — Ամենայն Հայոց Հայրապետութեան Հոգևոր Խորհուրդը կը հաստատէ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի ընտրութիւնը որպէս Առաջնորդ Ամերիկահայոց :
- Նոյն տարին կը հաստատուի Ամերիկահայոց Առաջնորդարանի պաշտօնաթերթ «Հայաստանեայց Եկեղեցի»ն :
- 1940 — Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս կը հաստատէ Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը :
- 1943 — Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս կ'ընտրուի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ :
- Նոյն տարին Առաջնորդ կ'ընտրուի Տ. Տիրան Վրդ. Ներսիսեան :
- 1944 — Լոնտոնէն կը ժամանէ Ամերիկահայոց նորընտիր Առաջնորդ Տիրան Վրդ. Ներսիսեան : Կը ստանայ Ծայրագունութեան աստիճան՝ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսէն :

1945 — Երեսփոխանական Ժողովը կը բարեփոխէ եւ կը վերակազմէ Ամերիկայի Հայոց Եկեղեցական Կանոնադրութիւնը :

Առաջնորդ Տ. Տիրան Մ. Վարդապետ եւ երեք այլ պատգամաւորներ՝ կը մասնակցին Ս. Էջմիածնի աղջային համագումարին :

Նորընտիր Կաթողիկոս՝ Տ. Տ. Գէորգ Զ.՝ Եպիսկոպոս կ'օծէ Ամերիկայի Հայոց Առաջնորդը :

1946 — Վեհափառ Հայրապետին կողմէ կը հաստատուի նախորդ տարին կազմուած Ամերիկայի Հայոց Եկեղեցական Կանոնադրութիւնը :

Նոյն տարին կը կազմուի Մայր Եկեղեցւոյ եւ Աղջային Տան շինութեան Կեդրոնական Յանձնաժողովը :

1946 — 1947, Ալեք եւ Մարի Մանուկեան Ֆոնտի ծախքով Առաջնորդարանը Ամերիկա կը բերէ վեց ընծայացու երիտասարդներ իբրեւ ուսանող աստուածաբանական ճեմարաններու մէջ :

1947 — Կը հաստատուի Ամերիկայի Հայոց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւնը :

Նոյն տարին յառաջ կը տարուին բանակցութիւններ՝ Ամերիկայի Առաջնորդական Թեմի միասնականութիւնը վերահաստատելու մտքով :

1948 — Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոս իր կատարած ձեռնադրութիւններով եւ երկու տարուան ընթացքին արտասահմանէն բերել տուած հոգեւորականներով, գործօն հովիւներու թիւը կը բարձրանայ 20-ի :

Նոր կազմուած ծուխերով համայնքներու թիւը կը բարձրանայ 37-ի :

1949 — Կը հաստատուի Ամերիկահայ Հոգեւորականաց Հիմնադրամը : Նոյն տարին կը գնուի Առաջնորդարանի սեփական հողն ու առժամանակեայ շէնքը եւ Առաջնորդարանը կը փոխադրուի անդ :

Գործօն հոգեւորականներու թիւը կը հասնի 22-ի :

Կը տօնուի Ամերիկահայոց Առաջնորդութեան հաստատման 50-րդ տարեդարձը :

THE FIFTIETH ANNIVERSARY OF THE AMERICAN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH

* * *

The Armenian communities in the Eastern Diocese of the Armenian Church in America will duly observe during the forthcoming months of October and November the fiftieth anniversary of the establishment of the Armenian Prelacy in the United States, which was authorized by the beloved "Hairig" of the Armenians, Catholicos Khrimian.

A special committee for the observance of the Jubilee, has been organized by the Central Committee of the Diocese, under the Presidency of the Right Rev. Tiran, Primate of the Armenian Church in America, to direct the work of the local committees which are to be formed in the communities of the Diocese. The Jubilee Committee, composed of seventeen members, has been holding meetings since April, under the chairmanship of Mr. Nishan Shahinian, formulating plans, so that the Jubilee will be observed in a manner worthy of the occasion.

The objects of the jubilee celebration shall be:

1. To portray the fifty years existence and progress of the Armenian Prelacy. To stress the important and permanent role of the Armenian Church in America and, at the same time, to set forth the merits and services of persons and organizations that have been active in the Church during that period.

2. To create a fund for the training of clergymen, thereby preparing the groundwork for a seminary.

On the occasion of the jubilee celebration of the Diocese of the Armenian Church in America, special note should be taken of the following facts:

1. The Diocese of the Armenian Church is but a section, a branch of the greater, world-wide Armenian Church, which spreads from Manchuria to the west to California, from the countries of the north to South America and Ethiopia. It lives and works, therefore, as a member of the body of the Armenian Church.

2. The Prelacy, headed by the Primate, is the representative of the supreme authority of the Church, the Catholicos of all the Armenians, and the religious authority of Sourb Etchmiadzin. The Armenian-American Diocese recognizes the other diocesan offices and, in turn, is recognized by them, and whenever necessary cooperates with them in all matters of interest to the Church.

Thus, the Diocese of the Armenian Church in America holds an important place in the complement of church and nation, thereby fulfilling its sacred mission, keeping alive the true faith of the Armenian Church and contributing to the progress of the Armenian people.

3. Throughout the history of the Armenian people, it was the Armenian Church which provided spiritual sustenance, vitality, and health. Throughout their eventful and tragic history the Armenians have not allowed the candle of their faith in their Christian church to go out. Even in communities far from their native soil, the Armenians have made it their main preoccupation to build a church with its adjacent school, receiving from them strength for the struggle of daily life.

Likewise, in the centuries to come, the Church will continue to be the vitalizing fountainhead of their spiritual life and existence and, as in the past, they will walk in the path laid out by the church fathers and the direction set by the history of the Armenian people.

4. In the course of the past fifty years the Armenian community in America has had many difficulties and crises, as its record will indicate. Yet during those fifty years it has also made noteworthy progress. With the gradual numerical increase of the community, the religious and cultural organi-

zations have taken root and have grown stronger. Through the grace of God, the Church and the Armenian Diocese have taken their rightful place, along with the other communities in this country, to carry out their vital mission among the Armenians. The Armenian Church, headed by the diocesan office, has been instrumental in the maintenance of the identity and vitality of our people. The pious and faithful have found in their church the necessary spiritual strength, which they would have been unable to find elsewhere. As a center of spiritual authority, the Prelacy has created an administrative and spiritual bond among the communities scattered far and wide, forging them into one.

5. The Prelacy has sponsored numerous undertakings for the benefit of our people and has supported worthy movements, appreciably contributing to their success and thereby proving worthy of its name.

During the past fifty years one church has been built every two years in the Diocese of the Armenian Church in America. Many communities, though lacking church edifices, have been organized.

6. The Diocese of the Armenian Church is not a self-contained institution or an organized body in the manner of a society. It represents the venerable Armenian Church, of nineteen centuries, and considers all Armenians as its sons, irrespective of their membership in political, charitable, and other movements.

7. The fifty year record of the Prelacy is the result of the perseverance and sacrifices of many individuals for the maintenance of the Church. Those excellent people have overcome countless difficulties to insure the increased brilliance of the Prelacy and of the churches under its jurisdiction, bringing them to their present satisfactory and comparatively prosperous state.

These results constitute a glorious monument for all those who have served as primates, clergymen, members of the Central Committee and of the School Board, delegates, trustees, members

of the auxiliary and ladies committees, various parochial bodies, and the loyal members of the Church.

8. America gives to the Armenian community the precious opportunity and freedom to keep and to cultivate its religious and national traditions, its press, parochial schools, and charitable and educational institutions. To a large extent, the Armenian-American community has, and will be able to profit even more, by these opportunities in the future, for the maintenance and development of its distinct religious and community life, under the sponsorship of the Church and the Prelacy. This will be possible if we are able to adapt ourselves to the local conditions without distorting the essential character of our faith and traditions.

The Armenian Church is not unique in this country in the assumption of such a task. There are numerous other communities that are grouped around their church and particular faith and are engaged in fruitful endeavors in order to preserve and improve their institutions and their own religious and community life. Thus, many groups that have come from Europe or the Near East, Greeks, Serbians, Bulgars, Assyrians, and many others, are engaged in similar activities. Their example should serve as an incentive to us, doing away with all undue pessimism about the future.

The Armenian community in America has attained a rather prosperous financial state. The sons of the Armenian Church, therefore, will do well to support their church and diocesan office with enthusiasm and generosity, so that the existence of the Church may be assured for fifty years to come, and the Church may persevere in its service to God and humanity.

9. The Armenian young generation at present shows considerable more interest in its Church than was expected a decade ago. Efforts should be made to strengthen the faith and loyalty of our young people towards the Church. In this work the Prelacy has a great role to play if the churches of the diocese continue to extend the necessary support.

10. In the diaspora the fate of all the Armenian organi-

zations is bound with that of the Armenian Church. It is the duty of the Armenian Church to inculcate the love of the Armenian people and its culture in our coming generations, a thing which is a condition for the continued existence of other organizations. It follows, therefore, that the strengthening of the Armenian Diocese will indirectly contribute also to the survival of the other organizations.

11. Though a national institution, the Armenian Church, as an institution founded by Christ, delivers its eternal message to all Armenians no matter where, when, and in what circumstances they may be. Nor will the Armenians cease to attend their church which, with its orthodox faith and admirable rituals, and as a treasurehouse of the Armenian language, is superior to all other churches and bears the imprint of true Christianity.

12. It is through the Armenian Church and the activities of the Armenian Diocese in America that it will be possible to acquaint our new generation and non-Armenian intellectuals with our culture. For Armenian culture contains elements that represent universal values, and as such, deserve the attention of everyone.

13. Aside from serving as a religious administration, the Prelacy should and can press forward vital tasks for the good of the Church and community.

There is the task of preparing clergymen qualified to serve in this country. Unless we have men who can devote all their time and energy to the Church, to cultivate the spiritual field, all other efforts will fail and all opportunities will prove useless.

Therefore, it is essential that the Diocese of the Armenian Church in America should have its seminary for the training of young men by competent Armenian teachers, profiting at the same time from the advantages offered by the American universities and other institutions of learning.

14. The Prelacy should also publish Armenian religious

and cultural publications so as to awaken in our young people an appreciation of our national values. Its press must expand so as to better represent our church and nation to the coming generation.

15. The Prelacy should give impetus to the Armenian schools and, so far as possible, to the instruction of the Armenian language to our young people.

For such undertakings the Prelacy is in need of the devotion and protection of its people and their moral and material assistance.

When we celebrate the fiftieth anniversary of the establishment of the Armenian Prelacy, we should rejoice that the seeds sown half a century ago have grown to benefit the life of the Armenian community in America. Inspired by the past, we should face the future with confidence and enduring faith.

We are certain that the Armenian community in America will understand and appreciate the meaning and value of this important celebration, and will make it a worthy and inspiring occasion in every way.

OUTSTANDING DATES IN THE HISTORY OF THE AMERICAN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH

* * *

- 1834 — The first Armenian immigrant comes to America as a student.
- 1870-1880 — Students come to America from Cilicia and the provinces, they return to their country after graduation.
- 1889 — The first Armenian clergyman, Der Hovsep Dzayrakouyn Vardapet Sarajian comes to America.
- 1895 — As a result of the massacres ordered by Sultan Hamid a new wave of immigration begins. Six clergymen come to America with the new immigrants.
- 1889 — The first Armenian liturgy is celebrated at Worcester.
- 1891 — The first Armenian church is consecrated at Worcester.
- 1894 — Der Maghakia Dzayrakouyn Vardapet Diranian comes to America as pastor of the parish of Worcester.
- 1898 — On the sixteenth of October an encyclical of the Catholics of all Armenians is solemnly read in the Church of the Saviour at Worcester. The Diocese is established in the same city. The first Archbishop being Bishop Hovsep Sarajian.
- 1901 — First conference of clergymen takes place (June 17,18).
- 1902 — The first Diocesan Convention meets at Worcester

on June 12 and the constitution is drawn.

- 1904 — On May 23 the second conference of clergymen takes place.
- 1906 — The second Diocesan Convention takes place.
- 1907 — The third Diocesan Convention elects Archbishop Yeznig Abahoony arachnord on May 30.
- 1913 — Archbishop Kevork Utujian arrives in America as plenipotentiary delegate of the Catholicos of all Armenians, and the sixth Diocesan Convention elects Der Arsen Dzayrakouyn Vardapet Vehouny as Arachnord. The Diocese at this period comprises the Armenians of the United States and of South America.
- 1920 — Bishop Khoren Mouradpegian arrives as plenipotentiary delegate to the Catholicos of all Armenians. The Diocesan Convention called by him elects Bishop Dirayr Der Hovannesian as Arachnord.
- 1923 — The Prelacy is transferred from Worcester to Boston.
- 1927 — The Prelacy is transferred to New York.
- 1928 — The region of California is separated from the Mother Diocese by encyclical from the Catholicos of all Armenians and has its own administrative Council and Arachnord. The number of Armenian Churches in the United States has now reached 19. The Diocesan Convention votes upon the constitution of the Armenian Church in Armenia and names it, "National Constitution of the Armenians in America."
- 1929 — Kevork V, Catholicos of all Armenians orders the "temporary" application of the Constitution agreed upon by the Diocesan Convention of the previous year.

- 1931 — The Diocesan Convention elects Bishop Ghevont Tourian as Arachnord.
- 1932 — The Armenian Diocese of America takes part in the election of the Catholicos with two delegates.
- 1933 — Dissensions occur in the Diocesan Convention and a section of the people separate from the Armenian Church. Archbishop Ghevont is assassinated.
- 1936 — Archbishop Karekin Hovsepian, delegate of the Catholicos of all Armenians, arrives in America.
- 1938 — South America organizes its own Diocese, separating from the Armenian Diocese of America. The fortieth anniversary of the establishment of the Armenian Diocese of America is celebrated, Bishop Mampre Calfayan being locum tenens. The Diocesan Convention elects Archbishop Karekin Hovsepian as Arachnord.
- 1939 — The Council for Spiritual Affairs of the Catholicate of all Armenians confirms the election of Archbishop Karekin as Arachnord of the Armenians of America. The official organ ("Hayastanyaitz Yegehetzi") of the Armenian Prelacy of America is founded.
- 1940 — Archbishop Karekin founds the Auxiliary Committee of the Prelacy.
- 1943 — The Arachnord Archbishop Karekin is elected Catholicos of Cilicia. Tiran Vardapet Nersoyan is elected as Arachnord.
- 1944 — The newly elected Arachnord of the Armenians of America, Tiran Vardapet Nersoyan arrives from London. He is made Dzayrakouyn Vardapet by Archbishop Karekin.

- 1945 — The Diocesan Council reforms the Constitution of the Armenian Church in America. Arachnord Tiran Dzayrakouyn Vardapet and three other delegates take part in the National Convention of Holy Etchmiadzin. The newly elected Catholicos H. H. Georg VI consecrates to the bishopric the Arachnord of the Armenians of America.
- 1946 — The Constitution of the Armenian Church in America drawn the previous year is ratified by H. H. the Catholicos of all Armenians. The Central Committee for the building of the Cathedral and Cultural Center is organized.
- 1946-1947 — The Arachnordaran welcomes to America six students to study for holy orders in American Theological Seminaries, the expenses being paid through the Marie and Alex Manoogian Fund.
- 1947 — The Armenian Church Youth Organization is founded. Deliberations are being made with the intention of re-establishing the unity of the Armenian Diocese of America.
- 1948 — The number of active pastors reaches 20 with clergymen ordained and brought into this country by the Arachnord, Bishop Tiran, during two years. The number of newly organized parishes reaches 37.
- 1949 — The Armenian Clergy Relief Fund is established. The Prelacy's own site and temporary building are bought and the Diocesan Office is transferred thereto. The number of active clergymen reaches 22. The Fiftieth Anniversary of the establishment of the Armenian Diocese is celebrated.